*նկարեաց զպատկեր իւր հանդերձ պատկերին դիւաց, յղեաց առ արքայն մեր տիրան։ Իսկ տիրանայ առեալ զպատկերն այն եդ եկեղեցին,[1] զի[2] պաշտեսցին ամենեքեան։ Իբրև եմուտ ս՟ր[3] հայրապետն[4] յուսիկ,[5] ի վեր հայեցաւ ետես զպատկերն յուլիանոսի եւ հանդերձ դիւաց պատկ՟րին. յայնժամ առե՛լ ընկէց յերկիր և խորտակեաց զնա. և ասէ թագաւորի պատկերին երկիրպագանեմ թէ բարեպաշտ[6] թէ կռապաշտ։ Իսկ ես[7] երկիր ոչ պագանեմ. չարն[8] յուլիանոս եւ խնդրեաց ի տիրանայ զօրք զի երթիցեն ընդ իւր պատերազմ ի վ՟ր պարսից։ Ապա տիրան[9] յղէ նամակ իւր ի ուշտունեացն գաւառն[10] ի կղզին յաղթամարու առ քաջ իշխանն[11] զուրայ տէր յաղթամու (=յաղթամարու). իսկ նա ժողովեաց զօրս բազում[12] գնացին օգնութ՟ն յուլիանոսի. և իբր*

**9.** *և իբրև[13] մերձ եղեն բանակին յունաց, . . . . . . . . . . . . .[14] գունդ զուրայի[15] հետամուտ եղև[16] պատանեակ մի. իբրև ետես զուրայ,[17] եհարց ուս-*

---

1 Զ. եդ *տղմ.*

2 Զ. զի°

3 Զ. *տղմ.*

4 Զ. հայապետն ( ն *տղմ.* )

5 Զ. յուսիկ *տղմ. Նխպ.* իսահակ

6 Զ. բարեպատ

7 Զ. *տղմ.*

8 Զ. չարն, *վրան տղմ.* գիւաց (=չարն գիւաց ?)

9 Զ. *Նխպ.* տիրանայ.

10 Զ. *տղմ. Նօտրգ.*

11 Զ. *վերջին* ն *յետոյ աւելացրած.*

12 Զ. բազում*-ից յետոյ, ջնջ. նշ.,* գնին.

13 Զ. եւ բրեւ

14 Զ. *այստեղ կէս տող ջնջել են բառերի վրայից թուղթ կպցնելով.*

15 Զ. *մի տող պարապ թողած.*

16 Զ. եղեւ *տղմ. Նօտրգ.*

17 Զ. *լուսանցքում Նօտրգ.*